ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

«ԳՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-25/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Հ.Մարտունի
25.03.2025թ.

ժ. 10:00

Նիստին մասնակցել են հանձնաժողովի նախագահ՝ Ա. Քոչարյանը,անդամներ՝ Ս. Աբրոյանը, Վ.Թամոյանը, Կ. Դավթյանը, Թ.Դավթյանը և հանձնաժողովի քարտուղար՝ Կ. Սիմոնյանը:

1. **ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
   Հանձնաժողովը որոշեց հաստատել նիստի հետևյալ օրակարգը
   1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
   2. Ընթացակարգի ներկայացված հայտերում կատարված շտկումների մասին:
   3.Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու, պայմանագիր կնքելու որոշման , չկայացած չափաբժնի հայտարարման և անգործության ժամկետ հայտարարելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0

2. «ԳՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-25/01» ծածկագրով գնման ընթացակարգի ներկայացված հայտերում կատարված շտկումների մասին:

2.1 Հրավերի սահմանված կարգի պահանջներին համապատասխան մասնակիցներ **«Բիդեք» ՍՊԸ –ի և «Սուպեր Մոնոլիտ» ՍՊԸ -ի** հայտերումում արձանագրվել էին հրավերի սահմանված կարգի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ուստի հանձնաժողովը կասեցրել էր նիստը և հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում էր ուղարկել մասնակիցներին ՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

2.2 Հանձնաժողովը ուսումնասիրեց **«Բիդեք» ՍՊԸ** –ի , **«Սուպեր Մոնոլիտ» ՍՊԸ** -ի կողմից ներկայացրած շտկումները :

2.3 Մասնակիցների կողմից մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկվել են բոլոր անհամապատասխանությունները: Ուստի գնահատող հանձնաժողովի կողմից նշված կազմակերպությունների հայտը գնահատվել է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0

3. Ընտրված մասնակիցների և պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին

3.1 «**ԳՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-25/01**» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով հաղթող մասնակից է ճանաչվել **«Սուպեր Մոնոլիտ» ՍՊԸ -ն**, որպես բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից

3.2 «**ԳՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-25/01**» ծածկագրով գնման ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ համաձայն «գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի երրորդ ենթակետի(ոչ մի հայտ չի ներկայացվել):

3.3 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և 1-ին չափաբաժնի համար անգործության ժամկետ սահմանելէ 10 օրացուցային օր՝ ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի: Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված մասնակցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

3.4 «**ԳՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-25/01**» ծածկագրով գնման ընթացակարի 2-րդ չափաբաժնի համար անգործության ժամկետ չի սահմանվում:

3.5 Օրենքով սահմանված կարգով պայմանագիր կնքելու նպատակով ընտրված մասնակիցներին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում բանկային երաշխիքի կամ 5 աշխատանքային օրվա ընթացքում կանխիկ փողի տեսքով ներկայացնել պայմանագրի ապահովում՝ գնման գնի 10 (տասը) տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ գնման գնի 15 (տասնհինգ) տոկոսի չափով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա. Քոչարյան

Անդամներ _____ Ս. Աբրոյան

_____ Վ. Թամոյան

_____ Կ. Դավթյան

_____ Թ. Դավթյան

Քարտուղար՝ _____ Կարեն Սիմոնյան